

եղբոր յաթոռն ամենայն Հայոց եղեւ սկզբնաւորին. իսկ յաւարտ յանգի ի Թեփայիթ յանապատն հօրն Անտօնին և տեառն Աստուծոյ յաւէտ...»:

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊՍ.— Մբ. Նւ. Ռուսելիի, 1701 ին Կ. Պոլիս:

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊՍ. ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ.— Մբ. Նւ. Զմիւռնիոյ՝ 1758 ին, Նւ. Կարնոյ 1762 ին, կը վախճանի նոյն տարին Կարնոյ Խաչկայ վանք գիւղին մէջ: 1758ին Ս. Յակոբի վանքին նուիրած է Նալեան Յակոբ պարք.ի Քարոզ Կիւրակիից ձեռագիրը (ՄԶ. Թ. 21):

ՄԱՐՏԻՐՈՍ ԿՐՕՆԱՒՈՐ (ԳՐԻԶ) ՀԻԶԱՆՑԻ.— Մբ. հայրը Ստեփանոս, մայրը Հռիփսիմէ. Ս. Յակոբի մէջ 1464ին կ'ընդօրինակէ Աւետարան մը, որ կը գտնուի այժմ վանքին մէջ (ՄԶ. Թ. 532) հետեւեալ յիշատակարանով. «... փափաքաւ եղեալ եղկելիս... և անարուեստ գրիչս Մարտիրոս, յետինս ի կարգաւորաց և առաջինս յանցաւորաց գաղափարեցի զսա ինձ գանձ անկողոյստելի, ըստ կարի իմում զարդարեցի ամ. գունովք. ի ժամանակս վերջինս, ի թիւս չափոյ... ԶԺԳ (=1364) ամի աբիթական տուժարի տոհմիս, ի սբ. և անկողս քաղաքս Երսղմ. ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ դամբարանի որդւոյն Զեբեթեայ առաքելոյ:» (Խապ. Յուդ. տետըր Բ. էջ 130):

ՄԱՐՏԻՐՈՍ, ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍ ՔՀ.Ի.— Ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը և Ս. Թորոս եկեղեցիին աջակողմեան դասին մէջ աւազանին քով խաչքար մը զետեղել տուած է հետեւեալ արձանագրութիւնով. «Յառաջնորդութեան Տէր Դաւիթ արհեպ.ին ես մեղաւոր Մարտիրոս կանգնեցի զխաչս բարեխօս առ Աստուած. ինձ և ծնողաց իմոց Սարգիս քհյ.ին և Խանուսին եւս առաւել Յովհաննէսին, Սարխօշին, և Միրանջին. թվին ՌԼԹ» (=1590):

ՄԱՐՏԻՐՈՍ ՊԵ.— 1399 ին հէօճէթներու համաձայն աթոռակից մը պատրիարքին (Ընդօր. 1909. էջ 291):

ՄԱՐՏԻՐՈՍ ՊԵ. ԵԿԻՊՏՍԵՑԻ.— Հայրը Սարգիս, մայրը Ըսքեթ. իր Վարագրութեան համաձայն Մարտիրոս պարք. էր քանիս քաջ եւ ընչիւք փարքաւ եւ սիրելի ամենայն իշխանացն. որ ի դուռն սուրբանայ: Իր գահակալութեան սկիզբը կը նկատուի 1419 թուա-